Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1105-09.06.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 22-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«8) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ հայցերով, եթե նախաքննության մարմինը, դատախազը կամ դատարանը հաստատել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմնարար իրավունքի խախտման փաստը, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ խոշտանգման հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1105-09.06.2025-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ~~ԼՐԱՑՈՒՄ ԵՎ~~ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 22-րդ հոդվածի ~~ութ~~ 1-ին մասի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«8) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ հայցերով, եթե նախաքննության մարմինը, դատախազը կամ դատարանը հաստատել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմնարար իրավունքի խախտման փաստը, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ խոշտանգման հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.»:

~~1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.~~

~~«1.1. Դատարաններում պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգումից օգտվում են՝~~

~~1) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հայցերով, եթե նախաքննության մարմինը, դատախազը կամ դատարանը հաստատել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով իրավունքի խախտման փաստը:»:~~

~~2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«2. Սույն հոդվածի 1-ին և 1.1-ին մասերում նշված անձինք տուրքի վճարման արտոնություններից օգտվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:»:~~

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1105-09.06.2025-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն*** ***Պատգամավոր՝*** ***Վլադիմիր Վարդանյան*** ***Պատգամավոր՝*** ***Ալխաս Ղազարյան***	**«Պետական տուրքի մասին օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Պետական տուրքի մասին օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. 8) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգ րքի 1087.2-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ հայցերով, եթե նախաքննության մարմինը, դատախազը կամ դատարանը հաստատել է պետական կամ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմնարար իրավունքի խախտման փաստը, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ խոշտանգման հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.»: «Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածով նախատեսվում են դատարաններում պետական տուրքի վճարումից ազատման հիմքերը: Հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ դրանք մեծամասամբ կապված են կա՛մ առավել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության, կա՛մ վտանգավորության բարձր մակարդակ կա՛մ ծանր հետևանքներ առաջացնող խախտումների հետ: Կարող ենք արձանագրել նաև, որ սահմանված հիմքերը հաճախ կապվում են հենց պետության կողմից հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասների հատուցման հետ, այնուամենայնիվ		

			հիմնարար իրավունքների խախտման մի շարք դեպքեր կարող են դուրս մնալ օրենքով կանխորոշած շրջանակից: Բարձրագույն դատական խորհրդից ստացված տվյալների համաձայն՝ վերջին տարիներին ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով ոչ նյութական վնասի հատուցման պահանջով ունենք հետևյալ պատկերը՝ • 2021 թվականին՝ թվով 26 քաղաքացիական գործ (12-ով ներկայացված հայցը բավարարվել է մասնակի, 6-ով ներկայացված հայցը մերժվել է, 1-ով ներկայացված հայցը թողնվել է առանց քննության), • 2022 թվականին՝ 42 քաղաքացիական գործ (2-ով ներկայացված հայցը բավարարվել է մասնակի, 10-ով ներկայացված հայցը մերժվել է, 3-ով ներկայացված հայցը թողնվել է առանց քննության, 1-ով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է), • 2023 թվականին՝ 11 քաղաքացիական գործ (4-ով ներկայացված հայցը բավարարավել է մասնակի, 5-		

			ով՝ մերժվել է, 1-ով՝ թողնվել է առանց քննության), • 2024 թվականին՝ 28 քաղաքացիական գործ (1-ով հայցը բավարավել է, 15-ով բավարավել է մասնակի, 6-ով մերժվել է): 2021, 2022, 2023 և 2024 թթ.-ին ընդհանուր առմամբ ներկայացված հայցադիմումների համար գանձվել է համապատասխանաբար 102,000, 335,000, 1,068,500, 139,000 ՀՀ դրամ պետական տուրք: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման հետ կապված հայցերի համար պետական տուրքից ազատումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ընդհանուր տրամաբանությունից, որոնք առանցքային են համարում արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող արդարադատության մատչելիության ապահովումը: Այս առումով, հարկ է անդրադարձ կատարել «Կրեուզն ընդդեմ Լեհաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմանը, որով դատարանը վճռել է, որ դիմումատուի՝ հայց ներկայացնելու համար վճարը նվազեցնելու մերժումը		

			անհամաչափորեն սահմանափակում է վերջինիս՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ խախտելով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Հարկ է նշել նաև, որ ներկայիս կարգավորումների շրջանակներում նշված հայցերի բավարարման դեպքում ընդհանուր կանոնների ուժով պետական տուրքի վճարման պարտականությունը փոխանցվում է պատասխանողին՝ հայցվորներն փաստացի ազատելով պետական տուրքի վճարման պարտավորությունից: Պետք է ընդգծել նաև, որ նախագիծը բխում է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի 3.5-րդ գործողությունից, որով նախատեսվում է սահմանել արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու ձևով հայցվորներին հիմնարար իրավունքի խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջի հայցերով: Ուստի՝ առաջարկվում է 162.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմնարար իրավունքի խախտման դեպքում նախատեսել պետական տուրքի արտոնություն՝ ազատման ձևով, ոչ թե վճարման հետաձգման, եթե նախաքննության մարմինը,		

			դատախազը կամ դատարանը հաստատել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման փաստը:		
2.	***ՀՀ կառավարություն***	**«Պետական տուրքի մասին օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր**	Հիմք ընդունելով վերոնշյալ առաջարկությունը՝ անհրաժեշտ է «Պետական տուրքի մասին օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**